«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Պատմություն

Մասնակից՝ Անի Հարությունյան

Ղեկավար՝ Արմինե Սաֆարյան

Թեմա՝ Պատմության ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

1. Ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում դիտազննողական նյութերի կիրառումը որպես պատմության ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման հիմք 5

2. Դիտազննական նյութերի միջոցով դասի հաջողությունը որպես պատմության ուսուցչի մասնագիտական առաջխաղացում 13

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ 18

Ներածություն

Ուսուցումը երկարատև գործընթաց է: Այն գոյանում է առանձին դասերից: “Դաս” հասկացությունը ունի աշխատանքային առաջադրանքի իմաստ Ուրեմն, դպրոցական դասը դիտվում է որպես ուսումնական աշխատանքի առաջադրանք՝ դասարանի (նախատեսված որոշակի ժամկետի համար, 45 րոպե): Անցյալի երկարամյա պատմության ուսուցչի փորձը քննադատաբար վերամշակվել և ստեղծվել է ուսումնական աշխատանքի կազմակերպման նոր համակարգ: Այդ համակարգում դասը հանդիսանում է ուսումնական գործընթացի կարևոր օղակը: Արդի էտապում ուսուցման բոլոր կանոնները կազմակերպող դասի անցկացումը միաժամանակ համարժեք է արվեստի ստեղծագործությանը:

Ուսուցչի գործունեությունը նախ և առաջ պետք է հենվի գիտության մեջ հաստատված հոգեբանական ու մանկավարժական օրինաչափությունների իմացության վրա, իսկ դա պահանջում է դասավանդումը հասցնել արվեստի մակարդակին: Միայն խելացի ուսուցիչը կարող է կանխատեսել դասի հեռավոր ընթացքը դասարանում:

Ուսուցչի խնդիրն է ամեն կերպ յուրացնել ուսուցման ու դաստիարակության օրինաչափությունները և դրանց հիման վրա գործադրել սեփական վարպետությունը: Կարևոր է նաև որոշել, թե ինչպիսին պետք է լինի օրվա դասի տեղը դասերի ընդհանուր համակարգում, թե նրանում ինչպես է իրացվելու թեմայի գլխավոր գաղափարը, թե ինչպես, ինչ մեթոդներով, ինչ հաջորդականությամբ պետք է նախապատրաստվել դասին, թե սովորողների մեջ ինչպիսի ունակություններ պետք է ձևավորել դասապրոցեսում, ինչպիսի քարտեզների օգտագործման խնդիրներ առաջադրել դասի ընթացքում, լրացուցիչ ինչ ձեռնարկներ են պետք տվյալ դասին, ինչպիսի աշխարհայացքային խնդիրներ պետք է լուծվեն թեմայի էական գաղափարներին զուգընթաց, ինչպես անհատականացնել ուսուցումը, ինչպես բոլոր աշակերտներին ներգրավել ինքնուրույն աշխատանքի մեջ և այլն:

Ներկայումս որպես պատմության ուսուցչի առարկայական մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման գործիք կարող է հանդիսանալ դիտազննական նյութերի օգտագործումը, որը ուսուցչից պահանջում է հաշվի առնել առանձին աշակերտների անձնական հակումները ու կարողությունները և ելնելով դրանից՝ անհատականացնել առաջադրանքները: Կարևոր է նաև առաջացնել ճանաչողական բուռն հետաքրքրություն: Պատմության ուսուցիչը պետք է տիրապետի դաստիարակության մեթոդների ճիշտ գործադրման, առանց որի

հնարավոր չէ ձևավորել սովորողների կայուն աշխարհայացքը: Պատմության ուսուցչի խնդիրն է ճիշտ կողմնորոշվել ուսումնադաստիարակչական գործի կազմակերպման առավել արդյունավետ միջոցների ու եղանակների ստեղծագործական ընտրության մեջ: Դիտազննական միջոցների օգտագործումը հանդիսանում է սուբյեկտի տրամաբանական մտածողությունը զարգացնելու կարևոր միջոց: Միջոցների ուսուցման նոր ձևի, նրա առանձին տարրերի հարցերով սկսել են զբաղվել շատ վաղուց, սակայն այն մեծ տարածում ստացավ 1965 թվականից: Այս գործում մեծ է մի շարք մանկավարժ գիտնականների դերը, հատկապես Մ.Ն. Սկատկինի, Մ.Ի Մախմուտովի, Յու.Ա. Ամիրջանյանի և ուրիշների ներդրումը[1]: Նրանք ոչ միայն հրատարակել են բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ, որոնցում հայտնում են իրենց կարծիքներ, այլ առանձին թեմաներ ենթարկել են մեթոդական վերամշակման, վերլուծել պրոբլեմային ուսուցման հիմունքներ, ցույց տվել նրա գործնական բնույթը ու առանձնահատկությունները:

[1] Սկատկին Մ.Ն, Նոր ծրագրին անցնելու կապակցությամբ ուսման արդյունավետության բարձրացման ուղիների մասին, Ե., 1973, էջ 41:

1. Ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում տեսասահիկներով դիդակտիկ նյութերի կիրառումը որպես պատմության ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման հիմք

Ներկայումս ժամանակակից պատմության ուսուցչին, բացի ընդունված պահանջներից, առաջադրվում են հետևյալ լրացուցիչ պահանջները.

1. Դասավանդման ընթացքում նախ պետք է խստագույնս պահպանել ուսուցման բովանդակությունը և ապահովել նրա գիտականությունը:

2. Պատմության ուսուցիչը, բացի պատմական խորը գիտելիքներից, մանկավարժական ու հոգաբանության իմացությունից, պետք է զինված լինի գիտության հրատապ, նորագույն պրոբլեմների իմացությամբ, ուսումնադաստիարակչական պրոբլեմները կյանքի հետ կապել կարողանալու վարպետությամբ:

3. Նա պետք է տեղյակ լինի այս կամ այն պրոբլեմի շուրջ եղած տեսակետներին և աշակերտներին մատչելի ձևով մատուցի՝ պարզաբանելով տարակարծությունները:

4. Նա պետք է ըստ ամենայնի տիրապետի ուսուցման գործընթացի մեթոդաբանությանը, որպեսզի բարձր դասարանցիներին անհրաժեշտ չափով զինի մեթոդաբանության օրենքներով:

5. Պատմության ուսուցիչը պարտավոր է կրթության բովանդակությունը կապել դպրոցի սահմաններից դուրս գտնվող սոցիալական գործընթացների և հիմնական խնդիրների հետ:

Կարևոր է գիտենալ ուսումնական հիմնախնդրի առաջադրման, տեսասահիկներով քարտեզների օգտագործման ստեղծման կանոնները: Պիտի իմանալ, թե առաջադրված պրոբլեմը ինչպես բաժանել ենթապրոբլեմների, հարցերը ձևակերպելու համար ինչպես գործադրել մասնակի որոնողական մեթոդը, երբ օգնել աշակերտին, երբ ոչ, ինչպես հետևել աշակերտների դատողություններին, պարզաբանել, թե ինչու պատասխանը ճիշտ չէ և այլն: Այդ ընթացքում կարելի է խրախուսել բանավեճերը, միաժամանակ օգնել աշակերտներին՝ իրենց ուժերի ներածին չափով կատարելու հետազոտական աշխատանք, որը անշուշտ, ինքնաարտահայտման հնարավորություն կընձեռի: Ժամանակակից պատմության մեթոդիկան խնդիր է դնում դասն անցակցնել հետևյալ սխեմայով. նախորդ դասին տրված ուսումնական նյութի կրկնություն, ուսուցչի կողմից նոր նյութի շարադրում, դրա ամրապնդում և տնային առաջադրանքի հանձնարարում: Նշենք, որ համակցված

դասը նման կառուցվածքով չի կարելի կիրառել ուսուցման բոլոր աստիճաններում և ուսումնական բոլոր նյութերի ուսումնասիրության համար[2]:

Պատմության դասին նախապատրաստվելիս անհրաժեշտ է պահպանել գիտելիքների շղթան, ճիշտ ընտրել դասը կազմակերպելու ուղիները ու մեթոդները: Չի կարելի շաբլոն ձևով գործադրել բազմազան մեթոդներ և հնարներ: Որևէ հնար կամ ուսուցման որևէ մեթոդ պետք է գործադրել միայն այն դեպքում, երբ իսկապես դրա կարիքը կա: Դասն անցկացնելուց հետո պարտադիր կարգով պետք է վերլուծել դասը, ճշգրտելու համար՝ ինչն է լավ, ինչը՝ վատ, ինչ անսպասելի պահեր եղան և ինչու:

Ուսուցիչը այն մանկավարժական աշխատողն է, որը

• դասապրոցեսի միջոցով ապահովում է ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը

• և անմիջականորեն պատասխանատու է այդ գործընթացի համար:

Ուսուցման և դաստիարակման մեջ փորձառարական աշխատանքի գիտական ապահովումն իր ամբողջ բազմազանության հետ մեկտեղ ենթադրում է որոշակի միասնականացում և մատչելիություն բավականին լայն պրակտիկ կիրառման համար: Ներկայումս համայյնքային մակարդակներում դրան են ուղղված կրթության բոլոր աստիճանների ստանդարտացումը:

ՀՀ մտնում է կրթական ծառայությունների միջազգային շուկայի մեջ և անց է կացնում դպրոցներում, միջնակարգ մասնագիտական հաստատություններում և բուհերում ամբողջ աշխարհում ընդունված պահանջներին համապատասխան կրթական պլաններ և ուսուցողական ծրագրեր:

1. Պատմության ուսուցչի դեպի կատարելագործության գործունեության հիմնական հատկանիշները

Դեպի առարկայական և մասնագիտական կատարելագործության գործունեությունը և այդ գործընթացը մեծ մասմաբ կախված են պատմության ուսուցչի դեպի կատարելագործության պոտենցիալից: Այդ իսկ պատճառով էլ այս դասակարգը դիտարկելու անհրաժեշտություն կա:

Անձի դեպի առարկայական և մասնագիտական կատարելագործության ձգտումը կապում են հետևյալ հիմնական պարամետրերի հետ.

- նոր պատկերացումներ և գաղափարներ ստեղծելու և գլխավորելու սեղծագործական կարողություն և, գլխավորը, նախագծել և մոդելավորել դրանք պրակտիկ ձևերում

[2] Вяаземский Е., Методика преподавания истории в школе. М. 2011, էջ 34:

- անձի պատրաստակամությունը իր պատլերացումներից տարբերվող նորն ընդունելու, որը հիմնված է անձի հանդուրժողականության, մտածողության ճկունության և շրջահայացության վրա

- մշակութա-էսթետիկական զարգացվածություն և կրթվածություն

- սեփական գործունեությունը զարգացնելու պատրաստվածություն, այդ պատրաստվածությունն ապահովո ներքին միջոցների և մեթոդների առկայություն

- զարգացած դեպի կատարելագործության գիտակցություն (դեպի կատարելագործության գործունեության արժեքը համեմատած ավանդականի հետ, դեպի կատարելագործության պահանջմունքներ, դեպի կատարելագործության վարքագծի դրդապատճառ)

Պատմության ուսուցչի պատրաստվածությունը դեպի կատարելագործության գործունեություն ասելով ընդունված է հասկանալ այդ գործունեության համար անհրաժեշտ անձնային (մեծ աշխատունակություն, ուժեղ գրգռիչներին հակազդելու կարողություն, հուզական բարձր կարգավիճակ, պատրաստակամություն ստեղծագործելու) և հատուկ (նոր տեխնոլոգիաների իմացություն, տիրապետում ուսուցման նոր մեթոդներին, նախագծեր մշակելու կարոություն, թերությունների պատճառների բացահայտման և դրանք վերլուծելու կարողություն) որակների ձևավորվածությունը:

Մանկավարժների դեպի կատարելագործության գործունեությունն ունի իր առանձնահատկությունը: Այն ենթադրում է համապատասխան սուբյեկտների գործողությունների որոշակի աստիճանի ազատության առկայություն: Դեպի կատարելագործության, որոնողական աշխատանքների առանձնահատկությունից ելնելով՝ այն շատ հաճախ իրականացվում է շոշափելի, գոյություն ունեցող փորձի սահմաններից դուրս և միայն մասնակի կարող է կարգավորվել և վերահսկվել գործող ինստիտուտների կողմից: Այդ իսկ պատճառով հասարակությունը ստիպված է վստահել հետազոտողին, նորարարին, ենթադրելով, որ արդարութ-յան, հասարակության առջև գոյություն ունեցող խնդիրների իրականացման վերաբերյալ նոր որոշումների և միջոցների ազատ որոնման գործընթացի մեջ այն չի ձեռնարկի այնպիսի գործողություններ, որոնք հետագայում կկարողանան վնաս հացնել հասարակության շահերին: Հետևաբար ստեղծագործելու ազատությունը պետք է համադրվի դեպի կատարելագործության որոնման սուբյեկտի բարձր պատասխանատվության հետ:

Պատմության ուսուցչի դեպի կատարելագործության գործունեությունը հաջող իրականացնելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում դեպի կատարելագործության որոշումներ կայացնելու, որոշակի ռիսկի գնալու,

կոնֆլիկտային իրավիճակները հաջող հաղթահարելու, դեպի կատարելագործության խոչընդոտները վերացնելու կարողությունների առկայությունը:

2. Կրթական ժամանակակից համակարգում ո՞ր նախապայմաններն են որոշում պատմության ուսուցչի դեպի կատարելագործության գործունեության անհրաժեշտությունը:

Մանկավարժական գործունեության դեպի կատարելագործության ուղղվածության անհրաժեշտությունը ժամանակակից հասարակության, մշակույթի և կրթության զարգացման պայմաններում որոշվում է մի շարք հանգամանքներից ելնելով.

- առաջացող սոցիալ-տնտեսական փոխակերպումներից, որոնք պայմանավորում են կրթական համակարգի, տարբեր տիպի կրթական հաստատություններում ուսումնա-դաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդիկաների և տեխնոլոգիաների հիմնովին թարմացման անհրաժեշտությունը,
- կրթության բովանդակության հումանիտարացման ուժեղացմամբ, կրթական դիսցիպլինաների կազմի և ծավալի անընդմեջ փոփոխություններով, ուսումնական նոր առարկաների ներմուծմամբ, որոնք պահանջում են ուսուցման տեխնոլոգիաների և կազմակերպչական նոր ձևերի մշտական որոնում: Տվյալ իրավիճակում ուսուցչական միջավայրում էականորեն աճում է մանկավարժական իմացության դերն ու հեղինակությունը, արդիականացվում են մանկավարժների մասնագիտական աճի խնդիրները,
- մանկավարժենրի վերաբերմունքի բնույթի փոփոխությամբ մանկավարժական նորարարությունների ընկալման և կիրառման փաստի վերաբերյալ: Ուսումնա-դաստիարակչական գործընթացի բովանդակության խիստ կանոնակարգման պայմաններում մանկավարժը սահմանափակված էր ոչ միայն նոր ծրագրերի, դասագրքերի ինքնուրույն ընտրության հարցում, այն նաև մանկավարժական գործունեության նոր հնարքների և միջոցների կիրառման հարցում: Ներկայումս կրթության մեջ դեպի կատարելագործության գործունեությունը ձեռք է բերում ընտրողական և ուսումնասիրող բնույթ: Հենց այդ պատճառով էլ մանկավարժական կոլեկտիվների և կրթական հաստատությունների մեթոդական ծառայությունների ղեկավարների գործունեության մեջ կարևոր ուղղություն է դառնում մանկավարժների կողմից ներդրվող մանկավարժական նորարարությունների վերլուծումն ու գնահատումը, դրանց հաջող մշակման և կիրառման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

- կրթական հաստատությունների ներխուժմամբ շուկայական հարաբերությունների մեջ, որոնք ձևավորում են իրենց մրցունակության իրական իրավիճակը

Եթե խոսենք ավելի պարզ և միանշանակ, ապա գլխավոր պատճառը, որը ստիպում է դիմել դեպի կատարելագործության գործունեության, հանդիսանում է սուր մրցակցությունը, որի հետ բախվում է կրթության ոլորտում ծառայություններ մատուցող գրեթե յուրաքանչյուր կոլեկտիվ: Այսօր կրթական հաստատությունների կոլեկտիվները պարտավոր են ինքնուրույն հոգ տանել մրցունակության պահպանման մասին, հետևել և կանխատեսել իրավիճակը կրթական շուկայում, հիմնական և պոտենցիալ մրցակիցների վարքի ուղին, գիտական և տեխնոլոգիական նոր ձեռքբերումների առաջացումը և այլն, և, համապատասխանաբար, լինել փոքր-ինչ առաջ:

3. Պատմության ուսուցչի աշխատանքի մեջ ինչը կարելի է սահմանել որպես դեպի կատարելագործության գործունեություն:

Միաժամանակ և հեշտ, և բարդ հարց է: Մի կողմից մենք հեշտ ենք թվարկում այն, ինչը դեպի կատարելագործության ենք համարում մեր աշխատանքի մեջ՝ բովանդակություն, տեխնոլոգիաներ, մեթոդիկաներ, մոտեցումներ, որոնք իրոք դեպի կատարելագործության են հանդիսանում ժամանակակից պայմաններում: Մյուս կողմից ապացուցել/հիմնավորել, առավել ևս նկարագրել մեր դեպի կատարելագործության գործունեությունը, դժվար թե կարողանա մեզանից յուրաքանչյուրը: Քանի որ նորարարությունը ոչ միայն փաստի ֆիքսումն է, այն մի ամբողջ համակարգ է պատմության ուսուցչի աշխատանքում, որի նկարագրության մեջ պետք է նշվեն բովանդակությունը, նպատակը, իրականացման ժամկետները, պրոբլեմները, որոնց լուծմանն է ուղղված նորարարությունը, դեպի կատարելագործության պրակտիկայի արդյունքների ախտորոշման միջոցները, փորձի ներկայացման ձևերը:

Իրենց նշանակությամբ կրթության մեջ նորարարությունները պայմանականորեն կարելի է բաժանել

- ընդհանուր (ժամանակակից կրթության գլոբալ կոնցեպցիաներ՝ ուսումնադաստիարակչական ծրագրերի օպտիմալացում, մարդասիրական դրույթներ և պրակտիկ տեխնոլոգիաներ, մանկավարժական գործընթացների կազմակերպում և կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ)

- մասնավոր (հեղինակային նորարարություններ, որոնք մշակվում են ներդաշնակ ժամանակակից կրթության օրինակի հետ և ներդրվում են անուղղակիորեն կրթական հաստատություններում):

Ամենատարածված և նշանակալի նորարարությունները ուսումնասդաստիարակչական գործընթացին իրենց պատկանելիությամբ կապված են

- կրթության գործելաձի նմուշին անցման հետ, կրթության մեջ կոմպետենտ մոտեցման ներդրմամբ, քանի որ ավանդական ուսուցողական մոտեցումը, որը կենտրոնացած է գիտության և տեխնոլոգիաների զարգացման ձեռք բերված մակարդակի վրա, սկզբունքորեն չի համապատասխանում դինամիկ զարգացող հասարակությանը (կրթության բովանդակություն)

- կրթական գործընացի կազմակերպման և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման հետ, որոնք դեպի կատարելագործության կրթական գործընթացի զարգացման հիմնական գործոններն են (ուսուցման մեթոդիկաներ, տեխնոլոգիաներ, մեթոդներ և միջոցներ)

- ընդհանուր կրթության մասնագիտացում, որոնք թույլ են տալիս ձևավորել մարդու անընդմեջ, անհատականացված, ճկուն և բաց ուսուցման գլոբալ համակարգ նրա ամբողջ կյանքի ընթացքում (ուսուցման կազմակերպչական ձևեր)

- կառավարչական գործունեության մասնագիտացում՝ որպես կրթության մեջ դեպի կատարելագործության գործընթացների արդյունավետության և հաջողության պայմաններից մեկի (կրթական հաստատությունների կառավարում)

Կախված կրթության կոնցեպտուալ դրույթների թարմացումից և բովանդակությունից՝ դեպի կատարելագործության գործընթացները կարելի է բաժանել մեթոդիկայի և պրոբլեմի վրա կենտրոնացվածների:

Մեթոդիկայի վրա կենտրոնացած դեպի կատարելագործության գործընթացների հիմքում ընկած էեմ կրթական այս կամ այն տեխնոլոգիաների կամ մեթոդիկաների իրացումը, օրինակ

- ժամանակակի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում
- կրթության բովանադակության ինտեգրացիայի սկզբունքի կիրառում
- զարգացող ուսուցում
- դիֆերենցված/տարբերակված ուսուցում
- նախագծային ուսուցում
- պրոբլեմային ուսուցում
- ծրագրավորված ուսուցում
- մոդուլավորված ուսուցում

Մեթոդիկայի վրա կենտրոնացած մանկավարժական տեխնոլոգիաների շրջանակներում մասնագիտական պրակտիկ գործունեության, պատրաստվածության, կոմպետենտության և մանկավարժական վարպետության համար պարտադիր

պայման պետք է լինեն ուսուցման ժամանակակից կազմակերպման հետևյալ մոտեցումները.

- անձի վրա կենտրոնացած մոտեցում: Ուսուցչի անձնային աճ ձեռք բերելու համար կիրառվում է համագործակցության, օգնության, փոխըմբռնման, հարգանքի և աջակցման ռազմավարությունը աշխատանքի մեթոդների և միջոցների ընտրության դեպքում

- ըստ էության մոտեցումը արտացոլվում է աշակերտների զարգացման ուղղությամբ ուսուցիչների փոխազդեցությամբ միջդիսցիպլինար կապերի սահմանման դեպքում էական համակարգային գիտելիքների ձևավորման հիման վրա

- օպերացիոնալ-գործունեական մոտեցումը հիմնվում է պետական կրթական ստանդարտների կարևորագույն դիրքորոշումների վրա: Աշակերտների մոտ գործելու կարողությունը ձևվորվում է գիտելիքների ձեռքբերման գործընթացում, այսինքն գիտելիքներն ընկալվում են դրանց պրակտիկ կիրառման ընթացքում

- ուսուցման նկատմամբ մասնագիտական կենտրոնացված մոտեցումն արտացոլվում է աշակերտների մոտ պրոֆեսիոնալ կոմպետենտություն և պրոֆեսիոնալ դիրքորոշումներ ձևավորվելու մեջ

- ակմեոլոգիական մոտեցումը սերտորեն կապված է բովանդակային մոտեցման հետ դեպի կատարելագործության կրթություն կազմակերպելիս, որը կայանում է ուսուցման գոյություն ունեցող մեթոդների և միջոցների թարմացման և նորերի մշակման մոջ, որոնք նպաստում են աշակերտների մոտ ստեղծագործական մտածելակերպին, ինքնազարգացմանը, ինքնակրթման և ինքնակառավարմանը:

- ստեղծագործական զարգացող մոտեցումը աշակերտների մոտ ձևավորում է արդյունավետ մտածողություն և ստեղծագործական վերաբերմունք գործունեության նկատմամբ, ստեղծագործական անձի որակներ և կարողություններ, գիտա-ստեղծագործական հմտություններ և կարողություններ

- համատեքստային մոտեցումը արտացոլվում է պետական կրթական ստանդարտների ուսումնասիրվող դիսցիպլինաների բովանդակությանը համապատասխան

Թվարկված ժամանակակից կրթական տեխնոլոգիաները համապատասխանում են կրթական կոնցեպցիայի պահանջներին և դրույթներին:

Պրոբլեմի վրա կենտրոնացած դեպի կատարելագործության գործընթացներն ուղղված են անձի մրցունակության ձևավորման հետ կապված որոշակի խնդիրների լուծմանը:

Ժամանակակից կրթության ամենաարդիական պրոբլեմներից մեկն է հանդիսանում «սոցիալական մրցունակության» դաստիարակությունը: Այդ

հասկացությունն իր մեջ ներառում է պրոֆեսիոնալ կայունություն, որակավորման բարձրացման ընդունակություն, անձի սոցիալական մոբիլություն և այլն:

Ժամանակակից պայմաններում մրցունակ մասնագետի ձևավորումը հնարավոր է միայն կրթական գործընթացում պրոբլեմի և մեթոդիկայի վրա կենտրոնացած նորարարությունների ներդրմամբ:

Այսպիսով դեպի կատարելագործության գործունեությանը նվիրված տեսական և մեթոդական աշխատանքների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել տվյալ գործունեության կազմակերպման սկզբունքներն ու օրինաչափությունները, որոշել դեպի կատարելագործության գործունեության նպատակները, որոնք կայանում են հետևյալում.

1. Դպրոցի կարողությունը ներկայանալու որպես դեպի կատարելագործմանն ուղղված կրթական հաստատություն, կրթական ծառայությունների շուկայում մրցունակ և պահանջված
2. Անցում մասնագետի պատրաստվածության որակական նոր մակարդակ, ով պատրաստ է ժամանակակից տեղեկատվական պայմաններում կրթության նոր ստանդարտների իրացմանը:

Պատկության ուսուցչի դեպի առարկայական և մասնագիտական կատարելագործության ձգտումը կարելի է մեկնաբանել որպես անձնային դասակարգ, ստեղծագործական գործընթաց և ստեղծագործական գործունեության արդյունք. այն ենթադրում է համապատասխան սուբյեկտների մոտ գործողությունների համապատասխան աստիճանի ազատության առկայություն: Անձի համար դեպի կատարելագործության գործունեության արժեքը կապված է ինքնաարտահայտման, իր կարողությունների կիրառման հնարավորության հետ: Դեպի կատարելագործության գործունեության ընթացքում առաջացած դժվարությունները անձի առջև կանգնում են որպես իրենց ուժերով դրանց հաղթահարման հեռանկարներ:

Դեպի կատարելագործության կրթական գործունեության իրացման գլխավոր արդյունք է հանդիսանում

- դեպի կատարելագործության ինֆրակառուցվածքի ձևավորումը, որն ապահովում է առաջատար փորձի հետագա ուսումնասիրում և կայուն զարգացում
- դպրոցի առաջատար դիրք կրթական շուկայում
- կրթական հաստատության դրական իմիջի ստեղծում:

2. Դիտազննական նյութերի միջոցով դասի հաջողությունը որպես պատմության ուսուցչի մասնագիտական առաջխաղացում

Բարձր մակարդակով վարել դասը՝ նշանակում է պատմական ամեն փաստ, դեպք, երևույթ, ասույթ, թևավոր խոսք պարզաբանել ուսուցման գիտականության սկզբունքով: Ապահովել աշակերտների կայուն ուշադրությունը, ճանաչողական հետաքրքրությունները, ուսումնական գործունեության ընթացքում նրանց գիտակցությանը հասցնել գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը, նրանցից յուրաքանչյուրի մեջ ներշնչել վստահություն իրենց ուժերի նկատմամբ, մեթոդական տարբեր հնարների օգնությամբ ապահովել դասի հուզականությունը:

Դասը արդյունավետության բարձր մակարդակ է ունենում այն դեպքում.

ա. երբ աշակերտներին միաժամանակ ցույց են տրվում ուսումնական նյութը սովորելու, պատմական երևույթները ընդհանրացնելու եղանակները,

բ. երբ արտահայտվում են պատճառահետևանքային կապերը, զարգացման վերընթաց բնույթը, պատմայան երևույթների կրկնվող օրինաչափ լինելը,

գ. երբ սովորողները գիտելիքները վեր են ածում համոզմունքների, ձեռք են բերում ակտիվորեն արտահայտվելու, բանավիճելու, մքերը հիմնավորված ձևով շարադրելու կարողություններ,

դ. ճիշտ է կազմակերպվում աշակերտների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգումն ու գնահատումը:

Հարկավոր է խուսափել ուսումնական աշխատանքի միօրինակությունից, տաղտուկից, իրենց դարն ապրած ուսուցման մեթոդներից և հնարներից, այն ամենից, ինչը հոգնեցնում, ձանձրույթ է պատճառում աշակերտներին: Ուրեմն, այստեղից պարզ է դառնում, թե որքան կարևոր է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: եթե ուսուցիչը նպատակադրվել է աշակերտներին տալ պատրաստի գիտելիքներ, դասանյութի գիտակցված յուրացում, գիելիքների փոխկապակցված վերարտադրություն և գործունեության եղանակների տիրապետում, կարող է գործադրել քարտեզների օգտագործման մեթոդը: Վերջինս կարելի է զուգակցել ինֆորմացիոն-ցուցադրական, ինֆորմացիոն-վերարտադրողական մեթոդների հետ: Նշված մեթոդները հնարավորություն կընձեռեն ուսումնական նյութի ամբողջ շարադրանքը, դրանից բխող եզրակացությունները հասցնել աշակերտներին[3]: Այդ ընթացքում կարելի է օգտագործել գիտազննական տարբեր պարագաներ ու միջոցներ և ապահովել նյութի գիտակցված յուրացումը:

[3] Короткова М. В., Наглядность на уроках истории, М. 2014, էջ 46:

Դասի հաջողությունը ոչ միայն կախված է մեթոդների ճիշտ ընտրությունից, այլ նաև դասը ճիշտ կազմակերպելուց, այլ կերպ ասած՝ դասը նախապատրաստվում է ոչ միայն մեթոդապես, այլ նաև կազմակերպչական իմաստով: Անգնահատելի է ուսուցչի բանավոր խոսքի դերը պատմության քարտեզների ուսուցման ժամանակ: Ուսուցչի կողմից դասանյութի շարադրումը դասապրոցեսի կարևորագույն օղակն է: Այն նպաստում է սովորողների կողմից գիտելիքների պարբերաբար ու հիմնավոր, կայուն ու խոր կերպով յուրացնելուն: Խոսքի միջոցով ուսուցիչը կարողանում է զանազան զգացմունքներ առաջացնել սովորողների մեջ, նրանց մասնակից դարձնել նկարագրվող պատմական նյութի ակտիվ ընկալմանը[4]:

Պատրաստվելով դասին՝ ուսուցիչը դիտազգնական միջոցների օգտագործման ժամանակ կշռադատում է իր խոսքը ինչպես բովանդակության, այնպես է ձևի տեսակետից, այսինքն՝ որոշում է թե ինչը ինչպես շարադրել: Պատմության դասանյութի բանավոր շարադրանքի կառուցվածքն ու բովանդակությունը պետք է համապատասխանի ուսուցման սկզբունքներին[5]: Բանավոր շարադրանքը որպես նոր գիտելիքների հաղորդման մեթոդ ուսումնադաստիարակչական աշխատանքում ունի մեծ առավելություններ: Այն առավել լայն հնարավորություն է ընձեռում ժամանակի միևնույն միավորի ընթացքում սովորողներին հաղորդել գիտելիքների մեծ պաշար, քան որևէ մեկ այն մեթոդ: Այդ մեթոդը հիմնվում է ուսուցչի կենդանի խոսքի վրա, որի ազդեցության ուժը շատ մեծ է: Այդ ազդեցությունը միանում է ուսուցչի անձնավորության. նրա շարժուձևի ներգործությանը:

Ուսուցման ժամանակ ուսուցչի բանավոր շարադրանքն ունի նաև թերի կողմեր, օրինակ, բոլորի համար հաղորդվում է միատեսակ, մինչդեռ դասարանում կան թույլ և ուժեղ սովորողներ: Արագ հաղորդման ժամանակ թույլ սովորողները չեն հասցնում հասկանալ, իսկ հակառակ դեպքում այն շեղում է լավ սովորողի ուշադրությունը: Երբեմն սովորողները ուսուցչի բանավոր շարադրանքից մտապահում են փաստերն ու օրինակները և չեն խորանում դրանց մեջ եղած պատճառահետևանքային կապերի, օրենքների և օրինաչափությունների մեջ, ինքնուրույն աշխատանքով չեն ամրապնդում ստացած գիտելիքները: Կամ աշակերտը դասագիրքը ընթերցելիս, եթե որևէ դարձված կամ միտք չի հասկանում, այն կարդում է երկրորդ անգամ, իսկ ուսուցչի բանավոր խոսքի ժամանակ, երբ նա կորցնում է մտքի թելը, կարող է նույնիսկ դադարել ուսուցչի լսել: Երբեմն ուսուցչի խոսքը, շարադրանքը, լինում է մոնոտոն,

---

[4] Ինչպես նախապատրաստել և անցկացնել պատմության դասը, Երևան, 1989, էջ 47-51:

[5] Ամիրջանյան Յու., Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ, Ե. 1975, էջ 47-50:

միալար, որով շեղվում է աշակերտի ուշադրությունը, հետաքրքրությունը, մի բան, որ դասագիրքը կարդալիս չի լինում:

Ուսուցման ժամանակ բանավոր շարադրանքի մեթոդի շուրջ եղել են բազմաթիվ կարծիքներ: Այսօր պատմության ուսուցչի խնդիրն է կշռադատել իր խոսքը և մեթոդամանկավարժական տեսակետից այն կառուցել ճիշտ, խստորեն հետևել իր շարադրանքի բովանդակությանը, կարողանալ հմտորեն համակցել ու զուգակցել ուսուցման տարբեր մեթոդների գործադրումը, շարադրանքն ընդհանուր առմամբ կառուցել քարտեզների եղանակով, ուշադրություն դարձնել ներառարկայական և միջառարկայական կապերի ստեղծմանը, տեղին օգտագործել սկզբնաղբյուրները, փաստաթղթային նյութերը, գեղարվեստական գրականությունը և այլն: Այս բոլորի իրականացումը, անկասկած, կախված է ուսուցչի խոսքի՝ շարադրանքի ճիշտ կառուցվածքից, և ընդհանրապես օրվա դասին լավ նախապատրաստված լինելուց, նրա գաղափարական-քաղաքական պատրաստվածությունից, առարկայական-մանկավարժական խոր գիտելիքներից ու ընդհանուր զարգացումից: Առանց այդ բոլորի ուսուցիչը չի կարող բավարել դպրոցի առջև դրված ժամանակակից պահանջները: Միաժամանակ ուսուցիչը պետք է ուսումնասիրի ուսումնական ծրագրերը, դասագիրքը և օժանդակ աղբյուրները, կարողանա ճիշտ պլանավորել ծրագրային նյութերը,ճիշտ կազմել թեմատիկ և դասի պլանավորումները[6]:

Պատմության քարտեզների օգտագործման ընթացքում մեծ ու վճռական դեր ունի ուսուցչի շարադրանքի կառուցվածքն ու բովանդակությունը:

Պատմության ուսուցչին նախ պետք է մտահոգի բանավոր շարադրանքի ճիշտ կառուցվածքը, որը պետք է արտահայտվի նրա օրվա պլանի մեջ: Դասանյութի լիարժեք յուրացման գրավականը բանավոր շարադրանքի համապատասխանեցումն է աշակերտների տարիքային առանձնահատկություն-ներին, գիտելիքների մակարդակին և նյութի յուրացման աստիճանին: Կառուցվածքային տեսակետից ամենից առաջ անհրաժեշտ է, որ ուսուցիչը սովորողներին նախապատրաստի իր շարադրանքը լսելուն, ընկալելուն, ըմբռնելուն: Բանավոր շարադրանքի կառուցումը պետք է սկսել այսպես: Նախ համառոտակի բացատրել տվյալ նյութի շարադրման կարևորությունը, ապա նոր նյութը շարադրելուց առաջ մի դեպքում կրկնել այն թեմաները, որոնց հետ հաղորդվելիք նյութը կապված է, որը հենարան կդառնա նոր նյութի շարադրման համար: Մի այլ դեպքում, սովորողներին կարելի է ցուցադրել դիդակտիկ պարագաներ՝ նկարներ, իլյուստրացիաներ, ուսումնական ֆիլմեր, դիաֆիլմեր, դիագրամներ: Ցանկալի արդյունք է տալիս շարադրվելիք նյութի թեմայի

[6] Берельковский И. В. История: Методика преподавания, М. 2001, էջ 69:

նախապես հայտնումը սովորողներին՝ բանավոր կամ գրատախտակի վրա գրելով, որը սովորողների մեջ հետաքրքրություն է արթնացնում, իսկ ուսուցիչը մնում է իր թեմայի շրջանակներում՝ չշեղվելով նյութից, դրսևորելով մտքի կարգապահությունը: Ամենաուշագրավ մտքերն անգամ եթե հաղորդվում են անկապ, ցաքուցրի, ոչ մի արժեք չեն կարող ներկայացնել սովորողների համար: Մտքերի ընդհանուր համակարգը խիստ անհրաժեշտ է. փորձված ուսուցիչը մի հարցի շարադրումը ավարտելուց հետո հասկացնել է տալիս, որ անցնում է մյուս բարդ հարցին[7]:

Հենց ուսուցչի ներածական խոսքն էլ պետք է ասվի այնպես, որ անմիջապես գրավի ունկնդիրներին, հետաքրքրություն և լսելու ցանկություն առաջացնի նրանց մեջ: Դիցուք, ուսուցիչը խոսում է հայ ժողովրդի պատմության դասընթացի կարևորության մասին: Նա պետք է ցույց տա, որ հարուստ է հայ ժողովրդի պատմությունը, որ աշխարհի շատ նշանավոր մարդիկ իրենց խոր համակրանքն են արտահայտել այդ պատմության հանդեպ:

Բանավոր շարադրանքի ընթացքում ուսուցիչը չպետք է մոռանա դարաշրջանի յուրահատկությունների ամբողջությունը, կոլորիտը. պետք է օգտագործի բնորոշ թևավոր խոսքեր, դարձվածքներ և պատկերավոր արտահայտություններ: Օրինակ՝ եթե խոսքը զենքերին է վերաբերում, պետք է օգտագործել դրանց հոմանիշները:

Իհարկե, պատմության առարկայի ծրագիրը ու դասագիրքը դպրոցում որոշում են աշակերտների հաղորդվող գիտելիքների ընդհանուր սահմանը և ծավալը: Սակայն այս դեպքում էլ աշակերտներին գիտելիքներ տալու համար ուսուցչին անհրաժեշտ է գիտելիքների ավելի մեծ պաշար որը պահանջում է նորից սիստեմատիկաբար հարստացնել իր իմացությունը պատմագիտության նորություններով: Նրա աչքից չպետք է վրիպեն թերթերում ու ամսագրերում լույս տեսած, հեռուստաէկրանից ցուցադրվող ու հնչող համապատասխան նյութերը: Ուսուցիչը իր շարադրանքի բովանդակության հիմքում պետք է դնի նաև ուսումնադաստիարակչական խնդիրներ՝ հաշվի առնելով դպրոցականների տարիքային առանձնահատկությունները ու աշակերտների զարգացման մակարդակը: Իհարկե շարադրանքի բովանդակության հիմքը պետական ծրագիրն ու դասագիրքն են, բայց դրանք ուսուցչի գիտելիքների չափանիշներ չեն: Եթե նա վերապատմի դասագրքի տեքստի սոսկ բովանդակությունը, դպրոցականները կձանձրանան նրան լսելուց: Դրա համար նախ ուսուցչի խնդիրն է գիտական փաստերից առանձնացնել գլխավորն ու հիմնականը և շեշտը դնել դրանց վրա՝ յուրացումն ապահովելու համար: Ուսուցիչը պատմելու ժամանակ կարող է օգտագործել լրացուցիչ նյութեր, մատչելի ձևով հաղորդել այն

---

7 Вяаземский Е., Методика преподавания истории в школе. М. 2014, էջ 74:

գիտական նորությունները, որոնք դեռ չեն արտացոլվել դպրոցական դասագրքերում: Այս նյութերից օգտվելիս նա ամենից առաջ նկատի է ունենում գիտությունների հիմունքներն ու ուսումնական ծրագրի թեմատիկ բովանդա-կությանը անմիջականորեն վերաբերող տեղեկությունները[8]:

Եզրակացություն

Այսպիսով՝ պատմության ուսուցիչը, որպես մոսնագիտական կատաելագործման միջոց, օգտագործում է տեսասահիկային քարտեզներ, որոնց օգտագործման ժամանակ նոր դասանյութի շարադրման բովանդակության մասին խորհելիս պետք է մտահոգվի պատմական բարդ տերմինների ու հասկացությունների բացատրման, նրանց էության բացահայտման հարցերով:

Նոր դասանյութի շարադրման բովանդակությունը որոշելիս և պատմական երևույթները բացահայտելիս ուսուցիչը պետք է դիմի կոնկերտացման եղանակներին: Նախ նա պետք է ներկայացնի կոնկրետ փաստեր, տվյալներ և դրանց հիման վրա կատարի ընդհանրացումներ, իսկ հնարավերության դեՃքում տեսասահիկներով ներկայացնի պատկերները, որոնք առավել մեծ տպավորություն կթողնեն աշակերտների վրա:

Այսպիսով կարելի է հետեւություն անել, որ մանկավարժի ստեղծագործական մոտեցումը դեպի մասնագիտական և առարկայական կատարելագործման պարտադիր նորարարական չէ այն ժամանակ, երբ նորարարական գործունեությունը միշտ ենթադրում է մասնագիտական ստեղծագործություն, իսկ սա նշանակում է, որ նրա կարեւորագույն բնութագրիչն է դառնում կրեատիվությունը որպես մանկավարժ-նորարար-կատարելագործչի ինտեգրացված որակ:

[8] Вяаземский Е., Методика преподавания истории в школе. М. 2001, էջ 37:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու., Պրոբլեմային իրավիճակները ուսուցման պրոցեսի ակտիվացման միջոցներ, Ե. 1975.
2. Ինչպես նախապատրաստել և անցկացնել պատմության դասը, Երևան, 1989.
3. Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001.
4. Մելիք-Բախշյան Ս.Տ., Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1975.
5. Սկատկին Մ.Ն, Նոր ծրագրին անցնելու կապակցությամբ ուսման արդյունավետության բարձրացման ուղիների մասին, Ե., 1973.
6. Берельковский И. В. История: Методика преподавания, М. 2001.
7. Вяаземский Е., Методика преподавания истории в школе. М. 2014.
8. Короткова М. В., Наглядность на уроках истории, М. 2014.